

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ ՊԵԿ նախագահի 04.08.2019թ. թիվ 236-Լ և 10.01.2022թ. թիվ 12-Լ հրամաններով

Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն ստանդարտը մշակվել է հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների հասանելիությունը, որակի բարձրացումը և ծառայությունների մատուցման ընթացակարգերի կիրառման միօրինակությունն ու միասնականությունն ապահովելու նպատակով:

2. Հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայություններ են համարվում հարկային մարմնի օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում հարկ վճարողների հաշվառումը (հաշվառումից հանումը), ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 304-րդ հոդվածով սահմանված հարկ վճարողների սպասարկումը, հարկ վճարողի պարտականությունների կամավոր կատարման ապահովումը, այդ թվում՝ հարկերի և վճարների վերադարձը, ինչպես նաև հարկ վճարողի դիմումի, հայտարարության և այլ փաստաթղթերի ընդունումը և դրանց համաձայն հարկային մարմնի կողմից իրականացվող գործողությունները՝ բացառությամբ հարկային պարտավորությունների կատարման ապահովման և հարկային մարմնի կողմից ընդունված իրավական ակտերի, ինչպես նաև հարկային ծառայողի գործողությունների կամ անգործության բողոքարկման վարույթների շրջանակում ներկայացրած դիմումների ընթացքի ապահովման գործողությունների:

3. Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունները՝ խմբավորված ըստ տեսակների, իրականացման ժամկետների և տրամադրման ձևերի ներկայացված են սույն հրամանի հավելված 2-ում:

4. Ծառայությունների մատուցումն իրականացվում է՝

1) ՊԵԿ պաշտոնական կայքի միջոցով,

2) ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման բաժինների (այսուհետ՝ սպասարկման բաժիններ) կողմից,

3) ՊԵԿ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից,

4) ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից,

5) ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման և հեռախոսազանգերի կենտրոնի կողմից,

6) ՊԵԿ քարտուղարության քաղաքացիների ընդունելության բաժնի կողմից,

7) ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի գործունեության վերահսկողության ապահովման բաժնի կողմից (այսուհետ՝ ՏՏՎ ՇԽԽ և ՎԳՎԱ բաժին):

5. Ծառայությունների մատուցման վայրերի հասցեների, հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի հասցեների, ծառայության մատուցման ժամերի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքի՝ www.petekamutner.am՝ «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտ» ենթաբաժնում:

6. ՊԵԿ-ը ծառայությունների մատուցումն իրականացնում է անվճար, բացառությամբ հարկային մարմնի կողմից ֆիզիկական անձանց անհատական հաշվի քաղվածքը փաստաթղթային տեսքով մեկ օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամից ավելի տրամադրելու դեպքի, որի համար օրենքով սահմանված է պետական տուրքի գանձում:

7. ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա՝ Ուսումնական կենտրոնի կողմից հարկ վճարողների կարող են մատուցվել վճարովի ծառայություններ (լրացուցիչ կրթության կազմակերպում, վերապատրաստում, վերաորակավորում, մասնագիտական որակավորման բարձրացում, հատուկ ուսուցում, դասընթացների կազմակերպում, հրատարակչական գործ, տպագրական գործ):

8. Ծառայություն մատուցող հարկային ծառայողի իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՊԵԿ նախագահի կողմից հաստատված՝ հարկային ծառայության տվյալ պաշտոնի նկարագրով:

II. Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների բնութագրեր և կանոններ

9. Հարկ վճարողներին մատուցվող յուրաքանչյուր ծառայություն պետք է համապատասխանի սույն բաժնով սահմանված բնութագրերին և կանոններին:

Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների բնութագրերն են.

- ծառայության տեսակը (անվանումը)՝ մատուցվող ծառայության բովանդակությունը հակիրճ բնութագրող սահմանում,

- ծառայության իրականացման ժամկետը՝ ծառայության մատուցման առավելագույն թույլատրելի ժամկետ,

- ծառայություն ստանալու համար դիմելու և մատուցման արդյունքի տրամադրելու ձևը՝ ծառայություն ստանալու համար դիմելու հնարավոր եղանակ(ներ)ը և ծառայության մատուցման արդյունքի տրամադրելու հնարավոր տարբերակ(ներ)ը,

- ծառայության մատուցման արդյունք՝ ծառայության մատուցման վերջնական արդյունքը, որն իր մեջ ներառում է նաև ծառայության մատուցման մերժումը սկզբնական կամ ընթացիկ որոշ փուլերում,

- ծառայության մատուցման իրավական հիմքեր՝ հարկային մարմնի կողմից ծառայությունների մատուցումը սահմանող օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթների հղումներ:

Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների կանոնները սահմանված են սույն հրամանի հավելված 2-ի «Ծառայության իրականացման ժամկետը» սյունակում:

Ծառայությունների մատուցման ժամերը ներկայացված են ՊԵԿ պաշտոնական կայքի «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտ» ենթաբաժնում:

10. Ծառայությունների մատուցումը ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման բաժինների կողմից կատարվում է էլեկտրոնային հերթի կարգով, առանց արտահերթ սպասարկման, բացառությամբ «Օրինապահ հարկ վճարող» հավաստագիր ստացած հարկ վճարողների:

11. Սպասարկման կենտրոնների և հեռախոսազանգերի կենտրոնի միջոցով սպասարկում իրականացնելու դեպքում պետք է ապահովել հարկ վճարողի կողմից ծառայությունների մատուցման որակի գնահատման հնարավորությունը:

III. Որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման կարգը

12. Հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով՝ Օրենսգրքով սահմանված կարգով կամ դատարան:

13. Ծառայության մատուցման վերաբերյալ ՊԵԿ աշխատակցի և (կամ) նրա ղեկավար անձանց որոշումների, գործողությունների (անգործության) մասով բողոքները ծառայություն ստացողը կարող է ներկայացնել հետևյալ եղանակներով՝

1) էլեկտրոնային՝ պաշտոնական կայքի «Դիմել ՀՀ պետական եկամուտների կոմիտե» ենթաբաժնի միջոցով,

2) գրելով նամակ և այն ուղարկելով՝ փոստային ինդեքս՝ 0015, քաղաք Երևան, Մովսես Խորենացու 3, 7, հասցեով կամ secretariat@petekamutner.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրելով առցանց նամակ «էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ»-ի՝ www.e-request.am միջոցով,

3) նամակը բերելով անձամբ և ներկայացնելով 0015 քաղաք Երևան, Մովսես Խորենացու 3,7 հասցեով՝ ՊԵԿ սպասարկման սրահ (Քարտուղարության քաղաքացիների ընդունելության բաժին) ամեն օր՝ ժամը 09:00-ից մինչև 18:00, ընդմիջման ժամ՝ 13:00-ից մինչև 14:00, բացի շաբաթ և կիրակի օրերից,

4) զանգահարելով հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի հեռախոսահամարով՝ +374 (60) 84 44 44 կամ անվճար հեռախոսահամարով՝ 080 00 10 08:

14. Հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքները հարկային մարմինը քննության է առնում և դրանց վերաբերյալ որոշումներ է ընդունում գրավոր դիմում բողոքը ՊԵԿ-ում մուտքագրման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից սկսած 30 օրվա ընթացքում: Առանձին դեպքերում ՊԵԿ նախագահի որոշմամբ նշված ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով, որի մասին իրազեկվում է դիմումատուն: Նշված ժամկետում դիմում-բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում դիմում-բողոքը բավարարելու մասին հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված: